ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

# ԲԱԶՄԱՎԷՊ

## 1918

Խմբագրութիւնս պատիւ ունի ծանուցանելու՝ թէ հրատարակուած է ԲԱԶՄԱՎԷՊ 1918ը։

Ան՝ իր բնական ձեւին տակ՝ աւելի քան 200 էջերու մէջ կը պարունակէ ներքին եւ արտաքին ծանօթ գրիչներէ յատկապէս պատրաստուած շահեկան յօդուածներ։ Բանասիրութիւնը, Հնախօսութիւնը, Հին եւ Նոր Գրականութիւնը, Գեղարուեստը, Ազգային ժամանակակից կեանքը, եւ այլն, եւ այլն, կը մատակարարեն մէն մի հայ անհատի համար բազմօգուտ եւ յոյժ հետաքրքրական նիւթեր։

ԲԱԶՄԱՎԷՊ 1918ը՝ անցելոյն աննպաստ հանգամանքներուն դիմաց մինչեւ 12 ամիս ակամայ եւ առժամանակեայ դադարումէ վերջ՝ լոյս կը տեսնէ այժմ Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐ ՆԵՐԿԱՅ 80ԱՄԵԱՅ ԳՈՅՈՒԹԵԱՆ։ Այս պատճառաւ իսկ՝ ջանք չէ խնայուած ըստ կարելւոյն լաւագոյն գրական արտադրութիւն մը ներկայացնելու եւ հանրամատչելի ընծայելու առհասարակ ամենուն, զարդարելով նաեւ գեղարուեստական տեսակէտով անոր էջերը 48 հետաքրքրաշարժ պատկերներով։ Այսու, ուրեմն, ան կը ներկայանայ միանգամայն իր տեսակին մէջ պատկերազարդ հատոր մը, որ պիտի ծառայէ նոյն իսկ իբրեւ զարդ հիւրասրահներու։

Արդ կը հրաւիրուի ընթերցասէր հասարակութիւնը, ինչպէս նաեւ ազգային բոլոր Մատենադարանները, Գրավաճառանոցները եւ հաւաքածոյ կազմող զանազան Հաստատութիւններ, Ընկերակցութիւններ, անյապաղ ձեռք ձգել ունել մէյ մէկ օրինակ։

Սակայն հարկ է այժմէն անդրադարձնենք, որ ԲԱԶՄԱՎԷՊ 1918ը՝ ժամանակիս պահանջած անսովոր ծախսերուն պատճառաւ քիչ քանակութեամբ տպագրուած ըլլալով՝ ուշ մնացողը ստիպուած է զրկուիլ անկից։

Ստանալ փափագողք՝ պէտք է առանձին յանձնարարութեամբ մ'իմացնեն մեզ. բայց նկատի պիտի առնուի միմիայն այն ապսպրանքը՝ որուն հետ միացած է նաեւ գինը՝ որ է

---

**Ֆր. գաղղ. 35. — Ամերիկայի համար՝ տոլ. 7.**

դիմել առ

*Rédaction de la Revue "PAZMAVEB"*

S. LAZARE — VENISE (Italie)

digitised by A.R.A.R.@